

ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Русское Богатство» ամսագրի այս տարուայ օգոստոսի համարում «ИЗ-ВЕЩЬ СИОНА» վերնագրի տակ մի հետաքրքիր չղրուած է դետեղուած, որ նուիրուած է աու-հրէայ բանաստեղծ Ֆրուզին:

Նոր տերմին չէ «Սիօնի երգը». հազարաւոր դարերից ի վեր, դեռ բաբելական դետերի ափերին հրէայ ժողովուրդը երգում և երազում է իր Սիօնը Մարգարէների ամբողջ սերունդներ Նճուվայի և երկնքի շանթերում միտած իրանց երգերով Սիօնը երգել են և անցել. նրանց հոգու այդ այրող հառաչանքներն անգիր արած յետագայ սերունդները տիեզերքի բոլոր ծայրերում կրինեցին և երեսպական հայրենիքի եթերային պատկերին փարած մնացին: Մինչև վերջին տարիները սակայն, բոլոր այդ երգերը, բոլոր այդ հառաչանքները ողբի, անցած երջանկութեան վրայ սուգի բնատուրութիւն ունէին. նրանք բոլորն էլ աւելի յուսահատ վշտի, քան արցունքի միջից իրապէս յուսացող շեշտն ունէին:

Հրէայ ժողովրդի մտածող մասը, նա որ աւելի խորն էր զգում իր անհայրենիք, անարգուած, հալածական ազգի ցարը, այդ եթերային ողբերը, այդ դարերի մէջ կորչող լացերն ու հառաչանքները փորձեց

հաւաքել և մի իրական լինակէտի վրայ դնել հին իլլիդիաները՝ Ծընունդ առաւ սիօնիցմը, այսինքն վերադարձ դէպի հին հայրենիքը, որովհետեւ առանց հայրենիքի, ինչպէս ասել է մի այլ հրէայ բանաստեղծ, չը կայ երջանկութիւնն:

Ինքն ըստ ինքեան դարաւոր անարգ վիճակից, յարատւ հալածանքներից լողնած, ձանձրացած մի ժողովրդի այդ անհանգիստ ժեստը, անտանելի կացութեան մի ելք, մի վախճան գտնելու մտահոգութիւնն ու փորձը անպայման համակրելի են. և այդ սիօնիստական շարժումը ամբողջ աշխարհում հետաքրքրութիւն ինչպէս և համակրութիւն զարթեցրեց: Սիօնիստների տարեկան կօնգրէսները Ներոպայում միշտ մի առանձին ուշադրութեան առարկայ եղան և ահագին, զուցէ և չափազանցապրած հետաքրքրութիւն զարթեցրին գրական, հասարակական և նոյն իսկ քաղաքական խաւերում: Վերջին ժամանակները սակայն այդ շարժման զեկավարները՝ դօկտոր Հերցլ և Մաքս-Նորդաու քաղաքագիտական հովելով բանուած՝ աշխտում են աղատութիւն և վերածնութիւն երազող իրանց տղէտ, խեղճ ժողովրդին ջեխերի միջից քաշ տալով սանել դէպի գերագոյն նպատակը: Ազգերի աղատագրու-

թեան պատմութեան մէջ մի չը տեսնուած կօմպրօմիսի օրինակ տալին այս նոր ձևի հայրենասէր- ները. հրապարակական մի խաչ- տառակութիւն էր զօքտօր շերցի ներկայանալը այնքան անմեղների դահիճ, Արդիւ-Համիդիւն. հրէայ ժո- դովրդի դատին, ամբողջ սիօնիզմին մի անարդանք էր անցեալ տարի Քաղէլում գումարուած հրէական կօնգրէսի հիացմունքի հեռագիրը ուղղած նոյն Համիդիւն. Ազատու- թիւնը ո՛չ մի երկրում, ո՛չ մի դա- րում սողալով ձնոք շի բերում և սողացողն արժանի էլ չի ազատու- թեան. Այդ էր, որ այնպէս միա- համուռ և ազգու լեզուով սասց սի- օնիստներին ամբողջ աշխարհի լա- սադոյն մամուլը լիշեալ երկու վա- րիչներէ՛ շերցի և Նօրդատի ամօ- թալի ընթացքի և անբարոյական տակտիկայի առթիւ. Անդամ լաւ հրէաները զայրուցի և ամօթի մի ճիշ արձակեցին Քաղէլի կօնգրէսի հեռագրից լետու. Փրանսիական հա- մակերկի հրապարակախօս Քերնար Լադարի այդ առթիւ հրատարակած յօդուածը մի ազլու և ազնիւ բողոք էր այդ սողացման դէմ. ձշմարիտ է, որ չը կալ երջանկութիւն ա- ոսնց հայրենիքի, բայց չարժէ հայրենիք, հող ձեռք բերել սողա- լով, ստորանալով և. որ զլիսատրն է, դահիճների հետ զոհերի դէմ մի- անալով:

Արախալի է սակայն, որ յՐԿ. Bor. «-ի յօդուածի հեղինակը Ս. Յ. գուցէ և մի հրէայ, նոյնպէս դատա- պարտում է շերցի և Նօրդատի ըն- թացքը, որոնք «թուրք վաթիշահի ոտներն ընկան», բայց նրա հաս- կացած սիօնիզմը հազիւ թէ թունդ սիօնիստներին զոհացումն տալ: Նա գտնում է, օրինակ, որ հրէայ ժողո- վուրդը կարող էր ձեռք ձեռքի տուած գործել իր խորթ հայրենիքի առաջադէմ ոյժերի հետ. թէ և դրա հետ միասին սիօնիզմը նրա համար

մի անհրաժեշտութիւն է, որովհետև հրէայ ժողովրդի տգէտ, դժբաղդ ա- հագին մասսայի համար դա կարող է ծառայել որպէս մի փրկարար լօ- ղունգ, և ընդունակ է բարձրացնել նրա մարդկային արժանաւորութիւ- նը:

Այդպիսի հայեացքի դէմ բազմա- թիւ են հակառակ կարծիքները թէ Ռուսաստանում և թէ արուսասահմա- նում. շատերի համար սիօնիզմը մի անմիտ ուսուցիւ է, որ ապրելու չէ, որովհետև կենսական հիմունք- ներ չունի. Այդպիսի առարկութիւն- ների դէմ է, որ յօդուածագիրը մէջ է բերում հեղինակաւոր կարծիքներ և մասնատրասպէս ուսու փպագիր Փօրկիլի կարծիքը, որ գուցէ ամենա- ճիշտ որոշումն է սիօնիզմի. «Ենձ ստում են, թէ սիօնիզմն ուսուցիւ է—չը զիտեմ, գուցէ: Բայց քանի որ ես այդ ուսուցիւի մէջ տես- նում եմ անլաղթիլի, բուն ծարաւ սղատութեան, ինձ համար դա լի- րականութիւն է, ինձ համար դա կիանքի մի գործ է»:

Այսպէս թէ այնպէս իրողութիւն է, որ այսօր սիօնիզմը լայն չափե- լով ընդգրկել է տառապող հրէայ ժողովրդի խանրը, ներկայանալով որպէս նրա լուսերի, թէկուզ ուսու- ցիւիական, նրա հեռուոր երազների մի վարպագոյն պատկեր. չէնց այն հանդամանքը, որ սիօնիզմն ունի նաև իր երգիչները, իր բանաստեղծ- ները, ամենալաւ ապացոյցն է, որ այդ շարժումը լայն ծաւալ է ընդունել. Այդ բանաստեղծների մէջ առաջնակարգ տեղ է բռնում Յրուզը՝ «Սիօնի երգիչը», որի դատա մօտիվները ամենաուժեղ կերպով են արտայայտում ստրուկ, հալա- ծական, երկրէ երկիր թափառական ժողովրդի հոգու տանջանքները, իր յոգնած զլուխը դնելու մի տեղ ճա- բելու բուն ցանկութիւնը, դարերի մէջ անհետացած իր հայրենիքի կի- ղի կարօտը. Թորթ հայրենիքի մէջ

հրէայ ժողովրդի զգացած օտարութիւնը Ֆրուզ արտայայտում է ամենայնպէս տողերով՝

«Որպէս անապատի թափառական
Սազնեբրի և լեռի ժայռեբրի մէջ,
Շրջում եմ ես ճանապարհս կոր-
ցրբած։

Մանուկն անեց, մեծացաւ բան-
տում,

Մի՛թէ կարող է նա երգել փայ-
լը ցերեկի,

Շառաչն ալիքի և դաշտն արձակի
Գունատ ու խեղճ է իմ երգը,

Ինչպէս գունատ է իմ կոչը բաղ-
դը»:

Ի՞նչ չուղիչ է այդ համեմատու-
թիւնը. ամբողջ մի ժողովուրդ դա-
րեբրի ընթացքում «անել է մեծա-
ցել բանտում» և բանտը լայն ա-
րար—աշխարհն է, ուր ոչ մի տեղ
նա իր սեփական արեւը, օրուայ մի
կտոր փայլը, պայծառ շողերը չունի,
ոչ մի երկրում հողու գնելու տեղ
չունի Բոլոր գաղմական, բոլոր
տանջուած ժողովուրդների երգն է
այս, բոլոր նրանց, որոնք խորթ
զաւակներ են օտար աշխարհներում:

Անհատական և ազգայնական լա-
րաբերութիւնների մէջ երբ դեկա-
վար է հանդիսանում անմիտ ատե-
լութիւնը, աւանդաբար հասած և
կուրօրէն շարունակուող հալածանքը,
միշտ և ամեն տեղ զոհերի քրտե-
րում կաթիլ կաթիլ թոյն է քամ-
տում ամեն օր, որ քանդում, կըր-
ծում է նրանց կենսական ոյժերը
ու ոչնչացնում, անօգուտ դարձնում
այնքան եռանդ, արտադրող ու բա-
րերար այնքան էներգիա:

Եւ ո՛չ մի ժողովուրդ աշխարհում
անպէս խորը կերպով չի զգացել
այդ ատելութեան թոյնի դառնու-
թիւնը. ո՛չ ոք հրէայի պէս իր սրտի
խորքում չի լացել իր խեղդուած,
պրկուած, ճմռուած հոգեկան կարո-
ղութիւնների կորուստը: Կրօնները՝
ինչպէս միշտ, աւելի սպառնալի և

պալքարող են դարձրել հին ատե-
լութիւնը, աւելի զօրացրել զոհերի
սրտի կիզիչ կակիծը: Այդ կակիծն է
ահա, սրտի խորքում, այդ խուլ հեծ-
կըլտանքն է, որ այնքան ուժեղ
ցաւի շեշտով Ֆրուզ արտայայտում
է հետեւեալ դիմումով քրիստոնեայ
մանուկին.

«Երբ մայրդ քեզ խնամոտ ու
քնքոյր ձեռքով

Ցանում էր դէպ կանաչաւէտ
դաշտերը,

Երբ քո կուրծքն աղատօրէն շըն-
չում էր,

Ես մի խուլ անկիւնում, քարի
վրայ, պատի տակ,

Շան ընում մոռացուած՝ ընկած
էի մենակ,

Եւ իմ անարգանքը հեղնում էիր
դու,

Եւ իմ ցաւերի վրայ քրքըում
էիր դու

«Միշտ նոյն թոյնը թշնամու-
թեան ու այրող ատելութեան

Դու անողորմ ձեռքով իմ կըրծ-
քում թափեցիր,

Օ՛, որքան թարմ ու կայող
ոյժեր

Դու իմ մէջ այդ թոյնով խեղ-
դեցիր»

Առանց հողի, առանց սեփական
ճակտի քրտինքով թրջուած դաշ-
տերի ազգութիւնն, իբրև ուրոյն
ամբողջութիւն, իբրև պատմական
մի շօշափելի երևոյթ, տրամաբանա-
կան անկարելիութիւն է: Եւ Ֆրուզ,
որ այդ ձգձարտութեան խորին գի-
տակցութիւնն ունի, դիմում է իր
անհայրենիք, անհող ժողովրդին և
հրաւիրում է նրան դառնալ դէպի
մայր հողը, վայր ձգելով ուսից թա-
փառական փերեզակի ամօթալի
պարկը, որ օտարների ատելութիւնն
է դրել նրա թիկունքին և որ նա
կրում է այնքան դարեբր, մոռացած
աւելի աղնացնող, աւելի գրաւիչ

պարագմունքի կարիքը: Ֆրուպ
ասում է.

«Կարծիր դէպի հող, դէպի գաշ-
տըն ու այգին.

Նրանք քո անցած երջանիկ
օրերին

Ծառայեցին քո մանուկ բաղդին,
Որպէս մի խաղող ու հրջանիկ

ապաստան»:

Որո՞նք են Ֆրուպի՝ իբրև «Սիօնի
կրգչի» անմիջական լուսերը, ի՞նչ
է սպասում, ի՞նչ է ուզում նա
այսօր, այս ժամին. ո՞րն է նրա
զերպողն ցանկութիւնը, նա բա-
նաստեղծ է, նա երազող է և իր
անմիջական իղձերն ու սպասելիք-
ները իր խոհերի և երազների պէս
եթերային, իղէալական են: Նա
խօսում է սրտերի հետ և իր աշ-
խարհը զգացմունքների աշխարհն
է, ուր նուիրական լուզելի թագա-
ւորութիւնն է քարոզում և միայն
լուզերի:

Այսպէս նա կը կամենար՝

«Որ մեր ստրկութեան անարդ
զօրութիւնը

Որպէս կատաղի քաղց մեզ ցաւ
պատճառէր,

Որ մենք զգայինք, ինչպէս ծա-
րաւ տօթ օրին,

Մի այրող տենչանք դէպի նուիր-
ական վիճակը,

Որն այժմ մեզ երազ է թուում—
Ազատութիւնը դառնար քաղցր

ու գրաւիչ,

Որպէս զի ալատ կեանքի պայ-
ծառ միտքը

Գլխակցական զարթոյթի կրա-
կով վառուած՝

Մեր հոգու մէջ ընկնէր, ինչպէս
արտի ահօտում

ընկնում է հատիկը օրհնուած
ցանքի,

Եւ ծաղկէր այնտեղ՝ որպէս վե-
րածնուած դրախտումս:

Այս բոլորը շատ գեղեցիկ է, լու-
գիչ. իւրաքանչիւր տողը խօսում է
տանջուած, անարգուած ժողովրդի

վերաւոր սրտին, բայց շատ աւելի
լաւ, շատ աւելի ցանկալի կը լինէր
տեսնել—ինչպէս ասում է նաև մեզ
զբաղեցնող յօդուածի հեղինակը—
որ հասնեն վերջապէս այն երջա-
նիկ օրերը, եւրբ մարդը մարդու մէջ
կը տեսնի ո՛չ գայլ, ո՛չ գազան, այլ
եղբայր: Այն ժամանակ գոցէ շա-
րաբաղդ ու տառապող հրէայ ժո-
ղովուրդը պէտք է՛ր զգայ զնալ
«Միջերկրական ծովից այն կողմը»
փնտրելու իր համարեա անդր-պատ-
մական Սիօնը...

Նոյն համարում՝ Ն. Միխայլովսկին,
Լ. Տօլստօյի լիսնամեայ գրական
գործունէութեան առիթով, ասում է.
«Վերլիշելով ռուսաց երկրի մեծ
գրողի» գրական գործունէութեան
ամբողջ լիսնամեայ ճանապարհը,
մենք տեսնում ենք, որ թէ իր մեծ
երկերում, թէ իր լաճախ շատ խո-
շոր սխալների մէջ, միշտ, իր գրած
առաջին տողից մինչև վերջինը,
նա եղել է և է ինքն, որ հաշուի է
առնում միայն իր սեփական խիղճը,
անկաշառ թէ իր միջավայրի
նախապաշարմունքների համար թէ
այսպէս ասած համաշխարհային նա-
խապաշարմունքների համար. որ
նա ոչ սակաւ փոխել է իր հայեացք-
ները, բայց երբէք չէտ չի կանգնել
զրանցից արտաքին ինչ ճնշման
տակ էլ է որ լինէր: Այդ մտքով նա
մեզ համար աւելի է, քան մեծ
գրող: Նա—կարծես տպագրական
խօսքի արժանապատուութեան կեն-
դանի, մարմին և արին դառած
խորհրդանշան, արմբու էս:

„Русская Мысль“, օգոստոս: Մի-
այն 50 տարի է, որ չեխինգֆօրսի
համալսարանում գոյութիւն ունի
ֆինական լեզուի և գրականութեան
համար առանձին կաթեղրատ: Պրօ-
ֆէսօր Սետելէի ճառը այդ առիթով
թարգմանուած է լիշաձ ամսագրի
մէջ: Շատ հետաքրքրական է իմա-

նալ թէ ինչ ահագին ջանքերով միայն կարողացել են ֆինական լե-
 գուն և գրականութիւնը շիջողականի
 հաւասար դիրք ձեռք քրերել առհա-
 սարակ Ֆինլանդիայի բարձրագոյն
 կրթական հաստատութիւնների մէջ:
 Այդ յօդուածի մէջ լիչատակուած են
 Հելսինգսփորսի համալսարանում
 ֆինական լեզուի և գրականութեան
 առաջին երկու պրոֆէսորների՝
 Աստրինի և Ելիաս Լեօնրօտի՝ անձ-
 նուէր և հակալական դործունէութիւ-
 նը: Լեօնրօտն էր, որ հաւաքեց և
 հրատարակեց ֆինական ազգային
 վէպ Աալեվալան, մարդկային
 մտքի ստեղծագործութեան այդ
 համաշխարհային գոհարներից մէ-
 կը:

Այժմ ֆին ազգը պատրաստում է
 արձան կանգնեցնել Ելիաս Լեօն-
 րօտին, նրա ծննդեան հարիւրամեա-
 կի օրը:

„Научное Обозрѣніе“, օգոստոս
 Բարօն Յոնդեր Խօվենի ճանապար
 հորկութիւնը „Արևելքում“ պարու-
 նակում է մի կտոր էլ հայերի մասին,
 որ բնորոշում է հեղինակի միակող-
 մանի և մակերևութային վերաբեր-
 մունքը դէպի իր դիտած իրողու-
 թիւնները:

Յոյների մէջ, ասում է բարօնը,
 ես նկատեցի տառնձին զայրույթ
 հայերի դէմ. այս վերջինները, երբ
 թուլացաւ թիւրքական վստահու-
 թիւնը դէպի պատումբում յօյնե-
 րը, կարողացան կամաց-կամաց ի-
 րանց ձեռը զցել շտ աչնպիսի
 պաշտօններ, ուր պահանջում էր
 լայտնի ճարպիկութիւն, լեզուների
 տիրապետում և հաշուեզտութիւն:
 Գալով Պօլիս, հայ ինտելիգենցիան
 թրքականից աւելի խորթ էր իր
 ժողովրդի իսկական յանքին: հե-
 տամուտ լինելով անելի փառասի-
 րական դիտումներին քան հայրե-
 նակիցների շահերին, այդ հայ ին-
 տելիգենցիան ամեն կերպ աշխա-

տում էր ստեղծել ինքնավար Հա-
 յաստան: Յիշեցնելով Պիւրքիային՝
 հայ ազգաբնակութեան մեծամաս-
 նութեամբ բնակուած գաւառների
 համար Բերլինի պալմանագրու-
 թեամբ խոստացած ընթօրմները
 մտցնելու անհրաժեշտութեան մա-
 սին, սով պում էին թրքական մո-
 լեռանդութեան՝ հայ մեծամասնու-
 թիւնը փոքրամասնութեան վերա-
 ծել: Հայկական շարժման պարա-
 գլուխները Պօլսի մէջ իրանց ապա-
 հով էին զգում: Եւրոպական համա-
 լսարաններում ուսած այդ քաղա-
 քադէտները համոզուած էին, որ
 միայն կոտորածը կը ստիպի Եւրո-
 պային՝ ուշք դարձնել հայերի գրու-
 թեան վրայ: Ենթարկուելով անգլի-
 ական ինտրիգներին (?!), նրանք
 ամեն կերպ աշխատում էին նաե-
 մացնել (?!) Փոքր-Սասիայում առուա-
 կան հեղինակութիւնը, ապադուցե-
 լով, որ անգլիացիներն են հան-
 դիսանում հայ ժողովրդի պաշտպան
 և ոչ առանձին: Գաղտնի կօմիտէտ-
 ները, տարածելով քայառնական
 պրօպլամացիաներ, ահարկում էին
 թիւրք պաշտօնեաներին: Աերջ ի
 վերջոյ, ի հարկէ, տուտում էին
 զլիսաւորապէս հայերից նրանք, ո-
 րոնք անզգուշութիւն ունէին ար-
 տայալտել անպատշաճ համակրանք՝
 Երդումը և թիւրքաց Հայաստանի
 այլ մասերը առաներից զբաւուելու
 ժամանակ: Եսկ կօմիտէտների պա-
 րազլուխները ակադեմիական հան-
 գըստութեամբ դատուութիւններ է-
 ին անում հապճեպ ընթօրմներ մտցը-
 նելու անհրաժեշտութեան մասին:

Մարդ զարմանում է որ Բրիտանե-
 լում կայացած հայաստեաների համա-
 ժողովից չեսոյ էլ զանում են զեռ
 աչնբա՜ն նախապաշարուած զուրի-
 ներ, որոնք հանդէս են գալիս հայ-
 կական հարցի մասին հնացած, ան-
 հիմն և կանխակալ կարծիքներով:
 „Научн. Обозр.“-ի խմբագրութեան
 պատիւ չէ բերում այդպիսի թեթև

վերաբերմունքը, Հակակահան կոտորածները թրքական լեժիմի քրտամբնելի բարբարոսութեան ու երոպական մեծ պետութիւնների քարասիրտ անտարբերութեան հետեւանք էին. հայ ինտելիգենցիան այդ բանում մեղ չունի. Եւ թիւրքահալերի ամբողջ մեղքը այն է լոր նըրանք էլ մարդիկ են, զգում են իրանք կրած անասելի տանջանքների և ելք են որոնում այդ զժոխաչին կացութիւնից...

«Մտակ», №№ 199—200. Չարեքի վանահայր Աստուածատուր վարդապետ 8էր-Յարութիւնեանի սպանութիւնը բացատրում է իբրև անխուսափելի հետեւանք այդ վարդապետի 28 ամեայ եռանդուն և անձնուէր գործունէութեան, որի շնորհիւ չափշտակիչների ձեռներից ազատուել են Փարսումանաց աշխարհի այդ ընդարձակ կուսական անասունների և օրէնքով հաստատուել իբրև վանքի սեփականութիւնն Յօդուածագիրը շատ աղղու ոճով պատկերացնում է այդ մեղանում սակա պատահող եռանդուն, գործունեայ և վանքի շահերին անսահման նուիրած շիտակ վարդապետի գործունէութիւնը և գուշակում նրա մահից ըստ մեր հոգևոր ատեանների անհոգութեան պատճառով, այդ հարուստ կալուածքի ոչնչացումը Սրբաբլի, ապիկար, թուլամորթ, կաշտակեր և փախկասէր վանականները մի ընդհանուր կանոն են մեղանում, իսկ Աստուածատուր վարդապետները բացատրութիւններս Յոյ է պատճառը որ ընդհանրապէս մեր վանական կալուածները մատնուած են անտէրութեան և զերիումներին:

Սիպրոսի հայ զաղթականութեան մասին Նիկոսիալից գրած մի լօզուածից քաղում ենք հետեւեալ սեղեկութիւնները.

Պատմական մի քանի տեղեկութիւններից պարզ է որ Սիպրոսում հայեր եղել են զեռ 800 տարի առաջ: Այժմ Սիպրոսի հայ հասարակութիւնը բաղկացած է 500 հոգուց, մեծ մասամբ Նիկոսիայում: Տեղացի հայերի լեզուն թուրքերէնն է, բայց զպրոցները շնորհիւ նոր սերունդը խօսում է հայերէն: Նիկոսիալի եկեղեցու բակում կայ երկսեռ զըպրոց, 60 սովորողներով: Ասանձին ուշադրութեան արժանի է կրթարան-որբանոցը, որ անգլիաբնակ հայերի ձեռքով բացուած է կիլիկեցի և թրքահայաստանցի մանուկների համար: Նպաստները ըստացում են Մանչեստրի հայ վաճառականներից: Կազմուած են օժանդակ մարմիններ՝ Լօնզօնում, Պարիզի և Գահրիէի մէջ ևս, տարեկան նուէրներ հաւաքելու նպատակով: Մինչև հիմա ծախսուած գումարը կը լինի տարեկան գրեթէ 400 անդլ. ոսկի, միջին հաշուով 40 ուսանողի համար: Կարևոր է Մանչեստրի հայ վաճառականներից ընտրուած Բնամակալութեան այն որոշումը, որի համաձայն կրթարան-որբանոցը պիտի վերածուի միջնակարգ ուսումնարանի և պիտի ընդունէ աւելի թուով կիլիկեցի և թրքահայաստանցի որդեգիրներ:

Մնշուշտ, կ'աւելացնենք մեր կողմից, Սիլիկիալի կենտրոնական դիրքը հայ զաղութների նկատմամբ և նրա անգլիական ազատ վարչութիւնը շատ մեծ չարամարութիւններ են տալիս մի այդպիսի օգտակար կըրթական հաստատութեան բարգաւաճման համար. հարկատուր են միայն առատ Նիւթական միջոցներ, որ կարող էին, ի միջի ալլոց, հայթայթել նաև Հնդկաստանի հայերը, որոնց հասարակական, կտակովի, հարստութիւնները այժմ պարպ տեղն են կորչում կամ դատապարտելի անգործադրութեան են մատնուած: Վաս չէր լինի եթէ

Մանչեստրի Ինամակալութիւնը հոգ տանէր այդ մասին. Մ. Նարբանդեանի օրինակը ցոյց տուց թէ ինչ կարող է անել հաստատակամութիւնը և անձնութիւնը որոշ նպատակի հասնելու համար. Այսօր Նոր-Նախիջևանը վայելում է Նալբանդեանի ջանքերով ստացած գումարների արդիւնքը:

Վրաց մամուլը. Վրաց թերթերի մէջ մի բանակուի է սկսուել. վրացական թթու և նեղ ազգասիրութեան օրգան «Իվերիան», Վրաստանը հայերից ազատելու համար, առաջարկում է բոլոր հայերի դէմ. նրա կարծիքով պէտք է վրացիները խօսք տան և հայերից ոչինչ չառնեն և դրանց ոչինչ չը ծախեն. այդ կը ստիպի որ հայերը իրանց փաստիտէն հաւաքեն և հետանան Վրաստանից, Հայրենասիրութեամբ վառուած «Իվերիան» զաւառապետների ուղարկութիւնն է դարձնում մի քստմեկտի «անկարգութեան» վրայ. հայ կառապանները Կախեթիայում վրացերէն չը գիտեն: Արեմն բաական չէ որ Վրաստանի հայերը իսկապէս միայն լուսաւորչական վրացիներ են, որի սպառնաց՝ Բուցեան, Գրձելեան ազգանունները, բաական չէ որ հայերը փոխում են վրացական վանքերի և եկեղեցիների արձանագրութիւնները հայկականի, այլ և յանդգնում են կառապանութեամբ պարապել Վրաստանի մէջ և վրացերէն չիմանալ... Այդ տուտուց դատողութիւնների դէմ լուրջ առարկութիւններ անել նշանակում է վիճել խուլի հետ: Միութեամբ կանը այն է, որ աւելի լուրջ վրացիները իրանք չեն հաւանում իվերիական այդ հայկերութիւնը. «Իվալին» և «Տնօրիսֆուրցելին» ուղղակի հեղինակ են և ծաղրում «Իվերիային», «Իվերիան» իր հայատեցութիւնը հասցնում է այնտեղ, որ ոչ միայն թութակի

նման կրկնում է «Новое Время»-ի սուտը, թէ իբրև հայ գիտնականների յօրինած քարտէղներում Հայաստանի սանձանները հասնում են մինչև Գօն, այլ և մօտենում է այդ թերթին իր չարահնդակ վերաբերունքով դէպի դժբախտ թիրաքահայերի վիճակը. Գիտնէք որ վրացի ազգասէրները սիրում են իդէալականացնել իրանց անցեալը և ամեն տեղ կրկնել թէ վրացիները քաջասիրտ են և ուղղական ոգու տէր. սակայն այդ ստասպելները, որ չեն ճշտում պատմական անաչառփաստերով, իրատուք չեն տալիս այդքան ստոր և ոչ ասպատական վերաբերմունք դէպի հարեան մի ազգի մարտիրոսութիւն... Պատմութիւն գրելը եթէ միայն ազգասէրների մօնօպօլիան լինէր, անշուշտ, աւելի առաքինի, ազնիւ, քաջ և քաղաքագէտ ազգ քան վրացիներն են—դժուար կը լինէր գտնել. սակայն պատմական զիտութիւնը այդպիսի մօնօպօլիա չէ տուել ոչ մի ազգի հայրենասէրներին, ուստի ինքնագով առասպելներն նոյնքան կարող են փոխել անցեալ իրականութիւնը, որքան տուտուց հայատեցութիւնը ոյժ ունի լուծել ներկայ տնտեսական կեանքի ստեղծած յարաբերութիւնները:

Համալուարան, չուլիս «Մուրճի» նախընթաց համարներում մենք անզգուշութիւն էինք ունեցել ուղարկութիւն դարձնելու այս ամասգրի վրայ և մի դիտողութիւն էինք գրել նրա մի յօդուածի առիթով: Ասում ենք, «անզգուշութիւն ունեցանք», որովհետև չէինք ճանաչում թէ դա ինչ տեսակ պարբերական հրատարակութիւն է: Մեզ խարողը վերնագիրն էր—«Համալուարան», գիտական ամսագիր: Գրեցինք մեր նկատողութիւնը, և այժմ ահա պարզ տեսնում ենք, որ

դա այն ապականուած մամուլի վիժմունքներինց մէկն է, որ ի դժբախտութիւն հայ ազգի պատուաստուել է արտասահմանեան հողի վրայ՝ մի քանի թիւրքահայերի ձեռքով: Նախապարան՝ մեզ հայհոլում է ամենալիրք խօսքերով. և իրատուք ունի, մենք միանգամայն անտեսարած պիտի լինէինք նրա գոչութիւնը Հայհոլել մենք չը գիտենք, պատրաստ ենք ջուխտ ձեռքով ստորագրելու, որ հոռու Պարիզի քուլվարներում հրաշալի կերպով

սովորում է հայհոլել, ամենաանպատկառ բառերով հայհոլել, շոտտութիւնը, այո, անպարտելի է, երբ միանում է Պարիզի տականքների հետ Բան շունենք ասելու: Մնում է միայն ակոստալ, որ հոստական այդ կեղտոտութիւնները չհամալրօտարան՝ անունով են պաակում: Բայց այտեղ էլ զարմանալու բան չը կայ. քննադատուած ինքնահաւանութիւնը մեզանում ընդունակ է կեղտոտել ամեն մի մաքուր անուն և գործ:

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

Լիճճ. Հ ա յ ո ճ գ զ Ր ա դ ա Ր ա ն ի վ ա Ր չ ու թ ե ա ն.— Մընի օրդըրը ուղարկել էք մեր անունով, իսկ դրամը ուրիշի անունով: Մանրամասնութիւնները նամակով:


Շուսիա. Հ ա յ ո ճ գ զ Ր ա դ ա Ր ա ն ի վ ա Ր չ ու թ ե ա ն.— Դադարեցրինք ուղարկել, որովհետև չէք լրացրել: Բուլղարիայի հայերը առհասարակ չեն հետաքրքրում. երեկ կամաց-կամաց դրանք էլ կը գնան Ռումանիայի, Ահառասնի և Հնդկաստանի հայերի տխուր շաղով:

Սարգսաբաթ. պ. Յ ա կ ս բ (Շ ա հ Ր ի ա Ր գ իւ ղ ու մ).— Փոքր լօղումները չեն վերադարձնում: Մենք չենք լիշում. հաւանական է, ինկատի կ'ունենանք և դէպք եղած ժամանակը կը վերադարձնենք լիշածները:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Այս համարում.

Նրես սող	սպուած է	պէտք է լինի
52 2	էր	էին
" 11	բունի (կտորի)	գնդի
	ու նեցող	ունեցող
132 41	հարուստ նման	լար և նման
157 10	թողաք	թողունք



Ս. Կրասիլնիկեան